

## Արձանագրություն №1/2015-2016

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2015թ. սեպտեմբերի 24-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 66-ը (վաթսունվեց):  
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **ԵՊՀ գիտական խորհրդի 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում** (զեկ. գիտքարտուղար Մ. Ա. Մոդոմոնյան):
2. **ԵՊՀ ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների մրցութային ընտրություն** (զեկ. գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյան, Ա. Ա. Սահակյան):
3. **Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում** (զեկ. գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյան, Ա. Ա. Սահակյան):
4. **2016-17 ուստարվա բակալավրիատի ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի հաստատում** (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան, Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան):
5. **ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգը նոր խմբագրությամբ հաստատելու մասին** (զեկ. գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազիսյան):
6. **ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին** (զեկ. գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազիսյան):
7. **2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում** (զեկ. ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
8. **Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման 2014/15 ուստարվա և 2011-15թթ. արդյունքների մասին** (զեկ. հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյան):

## 9. Ընթացիկ հարցեր

9.1 Ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ Էդվարդ Իշխանի Այվազյանի  
<<Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա>> աշխատանքը հրատարակության

երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու վերաբերյալ ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** - ԵՊՀ գիտական խորհրդի 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին: Գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյանը ներկայացրեց ժամանակացույցը: Հարցեր չեն չեցին:

**Որոշեցին.** - Հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

2. **Լսեցին.** – ԵՊՀ ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների մրցութային ընտրության, պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին: Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին ամբիոնի վարիչի և պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների և պրոֆեսորի ու դոցենտի գիտական կոչումների հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Ամբիոնի վարիչի հավակնորդներն էին.

	<b>Ազգանուն, անուն, հայրանուն</b>	<b>Հավակնած պաշտոնը</b>
1.	Աթանեսյան Արթուր Վլադիմիրի	Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչի
2.	Առաքելյան Արա Հրաչիկի	Արտասահմ. գրականության ամբիոնի վարիչի
3.	Դանիելյան Գևորգ Բալաբեկի	Մահմանադր. իրավունքի ամբիոնի վարիչի
4.	Միքայելյան Միքայել Վարազդատի	Տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի
5.	Քամալյան Արմեն Հրաչիկի	Դիֆերենցիալ հավասարում. ամբիոնի վարիչի

Պրոֆեսորի պաշտոնի հավակնորդներն էին.

	<b>Ազգանուն, անուն, հայրանուն</b>	<b>Հավակնած պաշտոնը</b>
1.	Մանուչարյան Հենգել Գերասիմի	Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսորի
2.	Քալանթարյան Ժենյա Անդրանիկի	Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսորի
3.	Մաքապետոյան Ռուբեն Կարապետի	Հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսորի

Համահամալսարանական ամբիոնների դոցենտի պաշտոնի հավակնորդներն էին.

	<b>Ազգանուն, անուն, հայրանուն</b>	<b>Հավակնած պաշտոնը</b>
1.	Կոստանյան Արմեն Հրաչի	Տեղեկատվ. համակարգերի ամբիոնի դոցենտի
2.	Մանուկյան Մանուկ Գարուշի	Տեղեկատվ. համակարգերի ամբիոնի դոցենտի
3.	Մանասյան Կարինե Աշոտի	Քաղպաշտպանության ամբիոնի դոցենտի
4.	Հակոբյան Հրաչյա Ռաֆիկի	Ֆիզդաստիարակության և սպորտի ամբիոնի դոցենտի

Պրոֆեսորի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Առաքելյան Սերգեյ Վահանի	Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ
2.	Ավետիսյան Վահրամ Դավիթի	Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Ներսիսյան Արմեն Ռովելի	Տնտեսագիտության տեսության ամբիոնի ասիստենտ
2.	Քոչունց Կարինե Վլադիկի	Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Հարությունյան Վլադիմիր (նախագահ)
2. Դիլբանդյան Սամվել
3. Շեկյան Լեոնարդ
4. Մովսիսյան Սվետա
5. Հարությունյան Արմենակ

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 66 անդամները: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ. Հարությունյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
<b>Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդներ</b>				
1.	Աթանեսյան Արթուր Վլադիմիրի	65	1	0
2.	Առաքելյան Արա Հրաչիկի	62	4	0
3.	Դանիելյան Գևորգ Բալաբեկի	62	4	0
4.	Միքայելյան Միքայել Վարազդատի	64	2	0
5.	Քամայան Արմեն Հրաչիկի	64	2	0
<b>Պրոֆեսորի պաշտոնի հավակնորդներ</b>				
6.	Մանուչարյան Հենգել Գերասիմի	64	2	0
7.	Քալանթարյան Ժենյա Անդրանիկի	65	1	0
8.	Սաքապետոյան Ռուբեն Կարապետի	63	3	0
<b>Դոցենտի պաշտոնի հավակնորդներ</b>				
9.	Կոստանյան Արմեն Հրաչի	66	0	0
10.	Մանուկյան Մանուկ Գարուշի	65	1	0
11.	Մանասյան Կարինե Աշոտի	65	1	0
12.	Հակոբյան Հրաչյա Ռաֆիկի	65	1	0
<b>Պրոֆեսորի կոչման հավակնորդներ</b>				
13.	Առաքելյան Սերգեյ Վահանի	62	4	0
14.	Ավետիսյան Վահրամ Դավիթի	62	3	1
<b>Դոցենտի կոչման հավակնորդներ</b>				
15.	Ներսիսյան Արմեն Ռովելի	66	0	0
16.	Քոչունց Կարինե Վլադիկի	66	0	0

Որոշեցին. – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

2.2 Ընտրված ամբիոնի վարիչների, պրոֆեսորադասախոսական կազմի անդամների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն ԵՊՀ ամբիոնի վարիչի մրցութային ընտրության և պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման մասին ընթացակարգերի:

2.3 Պրոֆեսորի և դոցենտի կոչումների վերոնշյալ հավակնորդներին շնորհել պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

2.4 Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար

3. **Լսեցին.** – 2016-17 ուստարվա բակալավրիատի ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի հաստատման մասին: Պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը, ներկայացնելով մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը, մասնավորապես, նշեց նախորդ ուստարվա ցանկի համեմատ տեղ գտնելիք փոփոխությունները:

**Որոշեցին.** – Հաստատել Երևանի պետական համալսարանի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առկա ուսուցման 2016/2017 ուսումնական տարվա բակալավրիատի ընդունելության մասնագիտությունների, կրթական ծրագրերի և քննությունների ցանկը:

4. **Լսեցին.** – ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգը նոր խմբագրությամբ հաստատելու մասին: Գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազինյանը նշեց, որ ԵՊՀ կանոնադրության փոփոխությամբ պայմանավորված՝ ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգում հիմնականում տեղ են գտնում այնպիսի փոփոխություններ, որոնք առնչվում են գիտական խորհրդի որոշ լիազորությունների՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին փոխանցվելու հարցին: Ռեկտոր Ա. Միմոնյանը քվեարկության դրեց նախագիծը, որն ընդունվեց ձայների 65 կողմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ:

**Որոշեցին.** –

4.1 Հաստատել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

4.2 Ուժը կորցրած ճանաչել 2011թ. դեկտեմբերի 22-ին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգը:

5. **Լսեցին.** – ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին: Գ. Ս. Ղազինյանը ներկայացրեց նաև ԵՊՀ կանոնադրության փոփոխության արդյունքում ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունում տեղ գտնելիք փոփոխությունները, կենտրոնանալով, մասնավորապես ֆակուլտետի կառավարման մարմինների թվի կրճատման հարցին (նախկինում դրանք երեքն էին՝ ֆակուլտետի խորհուրդ, ֆակուլտետի գիտխորհուրդ, դեկան, առաջարկվող նախագծում, ելնելով ԵՊՀ կանոնադրությունից, այդ մարմիններն են ֆակուլտետի գիտխորհուրդը և դեկանը): Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի

դեկան Ա. Ս. Բաղդասարյանն առաջարկեց նախագծից հանել 42-րդ կետում տեղ գտած «<Ղեկանատը հարցերը քննարկում է դեկանի առաջարկով>> արտահայտությունը: Անցկացվեց բաց քվեարկություն՝ Ա. Բաղդասարյանի առաջարկի վերաբերյալ, որն ընդունվեց 54 կողմ, 12 դեմ ձայների հարաբերակցությամբ: Այնուհետև ռեկտոր Ա. Միմոնյանը քվեարկության դրեց նախագիծը, որն ընդունվեց միաձայն:

**Որոշեցին.** – հաստատել ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը և ֆակուլտետներին հատկացնել մեկամսյա ժամկետ՝ օրինակելի կանոնադրության հիման վրա ֆակուլտետների կանոնադրությունները մշակելու և գիտական խորհուրդներում ընդունելու համար:

6. **Լսեցին.** - 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատման մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը տեղեկացրեց, որ ստացվել է նոր հայտ՝ ժուռնալիստիկայի ֆակուլտետում գրող, հրապարակախոս Արտաշես Քալանթարյանի անվան կրթաթոշակ բացելու մասին: Ժամհարյանը հրապարակեց նաև բոլոր այն կրթաթոշակների անվանումները, որոնք ֆինանսավորվում են դրսից, ոչ ԵՊՀ-ի միջոցներից (Վալերի Քոչարյանի, Ստեփան Ալաջաջյանի, Յուրի Ղամբարյայի, Վլադիմիր Ներսիսյանի և այլոց անուններով): Բանախոսը նշեց նաև որ անվանական 55 կրթաթոշակներից 34-ի դեպքում ֆակուլտետները ներկայացրել են նոր հավակնորդների: Ռեկտոր Ա. Միմոնյանն առաջարկեց հաստատել 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

**Որոշեցին.** –

- 6.1 Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում 2015/2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակից սահմանել գրող, հրապարակախոս Արտաշես Քալանթարյանի անվան կրթաթոշակ:
- 6.2 2015թ. սեպտեմբերի 1-ից Արտաշես Քալանթարյանի անվան կրթաթոշակը հատկացնել ժուռնալիստիկայի ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանողուհի Ամալյա Գեղամի Կարապետյանին:
- 6.3 Հաստատել Երևանի պետական համալսարանի 2015/2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:
7. **Լսեցին.** - Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման 2014/15 ուստարվա և 2011-15թթ. արդյունքների մասին: Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղայանն իր խոսքում նշեց, որ ծրագիրը, որը մեկնարկել է 2011թ. սեպտեմբերից, ավարտվում է 2016թ. սեպտեմբերին, ուստի ավարտին մնացել է ընդամենը մեկ տարի: Ըստ կրթամասերի և դրանցում ֆակուլտետների մասնակցության ներկայացնելով ծրագրի 2014-15 ուստարվա և 2011-15 ուստարիների ամփոփ արդյունքները՝ Ժ. Աղայանը, մասնավորապես, նշեց, որ 280 դասախոսներ դեռևս չեն ներկայացրել գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ՝ այդ գծով համապատասխան կրեդիտներ ձեռք բերելու համար, իսկ 261 դասախոսներ դեռևս անգլերենից քննություններ չեն հանձնել: Ռեկտոր Ա.

Միմոնյանը ֆակուլտետների դեկաններին կոչ արեց աշխատանքներ տանել համապատասխան ստորաբաժանումների շրջանում՝ դասախոսների կողմից գիտական ու ուսումնամեթոդական աշխատանքները ժամանակին ներկայացնելու և անզլերենի քննությունները հանձնելու ուղղությամբ:

**Որոշեցին.** – Ժ. Աղասյանի զեկուցումն ընդունելի գիտություն:

Ընթացիկ հարցեր.

**Լսեցին.** - Ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ Էդվարդ Իշխանի Այվազյանի «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու վերաբերյալ ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանն ասաց, որ հարցի շուրջ առկա են ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի դրական եզրակացությունը, ինչպես նաև մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի միջնորդությունը և առաջարկեց դրական ընթացք տալ ֆակուլտետի միջնորդությանը:

**Որոշեցին.** –

1. ԵՊՀ ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ Էդվարդ Իշխանի Այվազյանի «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» վերնագրով աշխատանքը երաշխավորել հրատարակության:
2. Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված աշխատանքը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

29.09.2015թ.